

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՆՖԻՆԻՏԻՎԻ ԵՎ ԲԱՅԻ ԱՅԼ ԱՆԴԵՄ ՁԵՎԵՐԻ ՀՎԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻՆՅԱՆ

Ձևաբանական հարացույցներում հակադրություններն ի հայտ են գալիս այն դեպքում, երբ հակադրության եզր կազմող միավորները ունեն որոշակի ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներ: Այդպիսի հատկանիշների առկայությունը թույլ է տալիս որպես հարացուցային ենթահամակարգ դիտել նաև ինֆինիտիվը և բայի այլ անդեմ ձևերը:

Հայտնի է, որ հին լեզուներում ինֆինիտիվի գործածության շրջանակն ավելի լայն է, որի հետևանքով մեծ է նաև նրա կազմած հակադրությունների քանակը: Արտահայտելով ընդհանուր բայական և նպատակային իմաստ՝ այն այլ անդեմ ձևերից հակադրվում է հիմնականում գերունդին և սուպինին, հազվադեպ նաև՝ գերունդիվին:

Լեզուների զարգացման նախորդ փուլերում դժվար է գտնել որևէ ինֆինիտիվ, որը լիովին անփոփոխ մնացած լինի: Այն բնականաբար պետք է անցնի զարգացման որոշակի ուղի և քերականացվի: Իր բնույթով լինելով բայանվան որևէ հոլովածև՝ ինֆինիտիվը ժամանակի ընթացքում ամրանում է այդ ձևում: Ընդ որում՝ հենց ինֆինիտիվի տարբեր հոլովածներն էլ երբեմն անվանվում են գերունդ: Եթե պայմանականորեն ինֆինիտիվ անվանենք բայանվան չթեքված ձևը, ապա կարող ենք խոսել գերունդի և սուպինի հետ կազմված հակադրությունների մասին թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա հայեցակետերից:

Ընդսմին, տարաժամանակյա հայեցակետից դիտարկելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նաև հակադրությունների հետագա չեզոքացումը:

Ինֆինիտիվն ընդհանրապես լեզուներում կազմում է շարահյուսական կառույցներ՝ հանդես գալով եղանակավորիչ, կիսաեղանակավորիչ, սկսական-տևական, նպատակ և շարժում ցույց տվող, *լինել* և *ունենալ*, ինչպես նաև միադիմի բայերի հետ, ապառնիի կազմության մեջ, անորոշը հայցականի, տրականի, ուղղականի հետ կառույցներում, ինչպես նաև պայմանական-հրամայական և ստորոգական գործածությամբ¹:

Լինել և *ունենալ* բայերի հետ այն հակադրվում է գերունդին, սուպին II-ին և գերունդիվին, նպատակ և շարժում ցույց տվող բայերի հետ՝ սուպինին, իսկ եղանակավորիչ բայերի, զգացմունք, կամք, ցանկություն արտահայտող ստորոգական կառույցների և միադիմի բայերի հետ, ինչպես նաև անորոշը հայցականի, տրականի, ուղղականի հետ կառույցներում և պայմանական-հրամայական ու ստորոգական գործածության դեպքում՝ դիմավոր բային:

¹ Հմմտ. **Габинский М. А.** Появление и утрата первичного албанского инфинитива. Л., 1970, էջ 190, **Brugmann K.** Kurze vergleichende Grammatik der indogermanischen Sprachen, Berlin–Leipzig, 1933, էջ 603:

Ինֆինիտիվի և գերունդի ընդհանուր հատկանիշն է գործողության ընդհանուր գաղափարի արտահայտումը, իսկ սուպին I-ի դեպքում՝ երկուսն էլ արտահայտում են նպատակի իմաստ՝ ունենալով գործածության տարբեր ոլորտներ: Եթե սուպինը գործածվում է միայն շարժման, ուղևորման բայերի հետ, ապա ինֆինիտիվը գործածության ոլորտի նման սահմանափակում չունի: Ինչ վերաբերում է գերունդիվին, ապա այն միայն իր մեկ իմաստով է համընկնում ինֆինիտիվի գործածությանը, այն է՝ կրավորական պարտավորվածության իմաստով՝ որպես ստորոգելի՝ *Et altera pars audienda est*. «Եվ մյուս կողմն էլ պետք է լսվի»²:

Գերունդ ասելով հասկանում ենք և՛ չթեքված բայանուն, ինչպես անգլերենում, և՛ ինֆինիտիվի հոլովված ձևերը, ինչպես՝ հին վերին գերմաներենում, հին անգլերենում, և՛ ինֆինիտիվի հոլովված ձևերին իմաստային առումով համապատասխանող ձևերը լատիներենում: Այսինքն՝ ինֆինիտիվի ուղիղ ձևը շատ հաճախ հակադրվում է իր իսկ թեք ձևերին, որոնք երբեմն զարգանում են որպես ինքնուրույն անդեմ ձևեր: Ինչպես վերը նշվեց, այդ հակադրությունները, ի հայտ գալով լեզվի զարգացման որևէ փուլում, ենթակա են հետագա չեզոքացման:

Ինֆինիտիվի անվանական ծագման մասին խոսել է դեռևս Ֆր. Բոպպը, որի կարծիքով, հ.-ե. ինֆինիտիվը նախապես ոչ այլ ինչ է, քան բայանուն՝ տրական, ներգոյական, հայցական հոլովածներով³:

Ընդ որում, ինչպես նկատում է Կ. Բրուզմանը, հնդեվրոպական որոշ լեզուներում ինֆինիտիվի հոլովածն այլևս նրա հարացույցի անդամ չի ընկալվում, ի հայտ է գալիս առանձին ժամանակածների մասնակի դրսևորումով՝ պայմանավորված արմատի որոշակի կերպային իմաստով: Իհարկե չի կարելի հերքել, որ առանձին լեզուներ ժառանգել են ոչ թե պատրաստի, այլ զարգացող ինֆինիտիվներ: Նախահնդեվրոպականին առավել մոտ վիճակում, ըստ Բրուզմանի, արիական լեզուն է, այնուհետև գերմանականն ու բալթիկ-սլավոնականը: Ամենահարուստն են հունարենի և իտալյան լեզուների ինֆինիտիվները, որոնք, մուտք գործելով բայական համակարգ, ձեռք են բերել սեռային, ժամանակային և եղանակային տարբերակում⁴:

Գերմանացի լեզվաբան Մ.Յասպելմատը վերոհիշյալ դրույթը տարածում է ոչ հնդեվրոպական լեզուների վրա՝ պնդելով, որ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական տարբեր լեզուներում ինֆինիտիվը բայանուն է եղել՝ դրված տրական, հայցական կամ ներգոյական հոլովներով: Ընդ որում՝ նա այդ հոլովները բխեցնում է ուղղության, նպատակի իմաստ արտահայտող ալլատիվ (մոտեցման) հոլովից⁵:

Այսպիսով, կանխադրվում է թեք, այդ թվում՝ նաև հայցական հոլովածներով դրված ինֆինիտիվի նախնականությունը, որը ժամանակի ընթացքում վերածվել է ինֆինիտիվի քարացած, անփոփոխ ձևի:

² Տե՛ս Покровская З. А., Кацман Н. Л. Латинский язык. М., 1987, էջ 190-191:

³ Տե՛ս Brugmann K., Delbrück B., Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Bd. 4, (Syntax von B. Delbrück), Teil 2., Strassburg, 1897, էջ 449:

⁴ Տե՛ս Brugmann K., նշվ. աշխ., էջ 351-352. Brugmann K., Delbrück B., նշվ. աշխ., էջ. 453:

⁵ Տե՛ս Haspelmath M. From purposive to infinitive – a universal path of grammaticization., *Folia Linguistica Historica* 10. 1-2, 1989, էջ 287-310:

Այն, որ ինֆինիտիվը չի կարելի հանգեցնել միայն մեկ հոլովի, ասենք՝ տրականի, նկատել է դեռևս Յ. Յիրտը: Նա չի բացառում նաև, որ հաճախ այդ ինֆինիտիվի վերջավորությունները ոչ թե հոլովական վերջավորություններ են, այլ, այսպես կոչված, անորոշ հոլով և ածական, ինչպես օրինակ՝ հունարենի *ai-ը*⁶:

Իհարկե, Յիրտը նաև հստակորեն չի սահմանազատում ինֆինիտիվը սուպինից: Այսպես՝ հայցական են, ըստ նրա, լատիներենի սուպինը՝ *-tum*, օսկ-ուներենի համապատասխան ձևերը՝ *-tum*, հին հնդկերենի *-tum*, հին բուլղարերենի *-ն* վերջավորությունները: Հայցական կամ ուղղական են գերմանական լեզուների *-an-ով* (*niman*) և օսկ-ուներ.՝ *-om-ով* ինֆինիտիվները, որոնք հանդես են գալիս հատկապես շարժման բայերի հետ: Սա նույնպես վկայում է, որ այդ ինֆինիտիվի հիմքում ևս ընկած է ուղղության հոլովը՝ *casus directivus*:

Ուղղության հոլովի իմաստը մյուս կողմից հաճախ ամրապնդվում է նախդիրներով, ինչպես օրինակ՝ գերմանական լեզուներում՝ **tō*, հվգ. *zuo*, *zi*, գոթ. *du*: Գոթերենում արդեն հիմնականում *du-ով* ձևերում ուղղության հոլովի իմաստը չի զգացվում: Լատիներենում նրան համապատասխանում է *ad+գերունդիվ* կառույցը, ռոմանական լեզուներում՝ *ad-ով* ինֆինիտիվը⁷, իսկ հայերենում *ի* նախդրով անորոշը:

Եթե հայերենում *ի* + անորոշ և աննախդիր անորոշի հակադրությունը հետագայում վերածվում է անփոփոխ (ուղիղ հոլովով) և տրական հոլովով դրված անորոշի հակադրության՝ *լինել-լինելու*, ապա լատիներենի *ad* նախդրով գերունդ-ինֆինիտիվ-սուպին եռանդան հակադրությունը ռոմանական լեզուներում վերածվում է ինֆինիտիվի և նախդրավոր ինֆինիտիվի երկանդան հակադրության:

Քանի որ հայցականն ու ուղղականը հիմնականում ձևով միմյանցից չեն տարբերվում, Յիրտը հիմք է ընդունում շարահյուսական պաշտոնը: Նա ինֆինիտիվի հիմքում երբեմն տեսնում է ներգոյականի իմաստը, օր.՝ *facere perseverare*, բառացի՝ «պնդել արածի մեջ», հուն. *εγκαρτερειν τω σιωπαν* / «նա պահպանեց լռություն», բառացի՝ «նա մնաց լռության մեջ»:

Ինչ վերաբերում է տրականին, ապա նրա կարծիքով՝ տրականը հիմնականում սահմանափակվում է անձի առումով, բացի դրանից՝ Յիրտը ընդունում է միայն սլավոնականի և հնդկերենի տրականները, այն էլ՝ որպես ուղղության տրական⁸: Ինչպես վերը նշվեց, որոշ լեզուներում նախդիրը, խնդրառելով հայցական հոլով, արտահայտում է տրականի իմաստ, ինչպես հայերենում և լատիներենում, կամ տրականը ուղեկցվում է նախդրով, ինչպես օրինակ՝ գերմաներենում և անգլերենում:

Այսպես՝ հին գերմաներենում, ինչպես և մյուս գերմանական լեզուներում սովորական ինֆինիտիվից բացի գոյություն են ունեցել կրկնակի *n-*ով սեռականի և տրականի հոլովածևերը (օրինակ՝ *nemannes*, *nemanne*), որոնք ստացել են գերունդ կամ գերունդիում անվանումը՝ լատիներենի քերականության ազդեցությամբ, որտեղ այս տերմինով անվանել են ինֆինի-

⁶ Տե՛ս **Hirt, H.** Indogermanische Grammatik, Teil VII, Syntax II, Die Lehre vom einfachen und zusammengesetzten Satz, Heidelberg, 1937, էջ 102-105:

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 105-107, 109-110:

տիվի թեք հոլովածներին իմաստային առումով համապատասխանող բա-
յանունները: Տրականը գործածվում է միայն նախդիրների հետ, հատկա-
պես **zu** -ի՝ նպատակի իմաստով: Ընդ որում, **zu** նախդիրը, ժամանակի ըն-
թացքում կորցնելով իր նախնական իմաստը, տարածվում է նաև այն դեպ-
քերի վրա, որտեղ նպատակի իմաստը ընդհանրապես բացակայում է: Ժա-
մանակի ընթացքում գերունդը գերմաներում աստիճանաբար վերանում է,
իսկ նրա արտահայտած նպատակի իմաստը ձեռք է բերում նոր ձև՝ ի դեմս
um ... zu կառույցի:

Սրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ ինֆինիտիվը իր անվա-
նական նշանակությամբ անջատվում է բայական համակարգից՝ շնորհիվ իր
լայն գոյականացման, սեռական հոլովով գերունդը վերածվում է գոյակա-
նացված ինֆինիտիվի նույն հոլովածին: Մյուս կողմից՝ ինֆինիտիվի բայա-
կան նշանակությունը ավելի է ուժեղանում՝ համեմատած լեզվի պատմու-
թյան նախորդ փուլերի հետ: Դա բնորոշվում է նաև բայի այնպիսի քերական-
ական կարգերի ձեռքբերմամբ, ինչպիսիք են սեռն ու ժամանակը⁹:

Ի հակադրություն հին վերին գերմաներենի՝ հին անգլերենում ինֆի-
նիտիվը հանդես է գալիս երկու հոլովով՝ ուղղական և տրական, վերջինս
էլ **to** նախդրով: Այստեղ նույնպես ժամանակի ընթացում **to**-ն կորցնում է իր
նախնական իմաստը և ձևական նշանակություն է ստանում: Իսկ նպատա-
կի իմաստը սկսում է արտահայտվել **for** նախդրի միջոցով¹⁰:

Ուշագրավ է, որ այն լեզուներում, որտեղ առանձին գերունդ կա, բա-
ցակայում է ինֆինիտիվ – գոյականացված ինֆինիտիվ հակադրությունը,
հակառակ դեպքում չեզոքանում է ինֆինիտիվ–գերունդ հակադրությունը
և ինֆինիտիվը գոյականացվում է, ինչպես օրինակ՝ գերմաներենում:

Այսպիսով՝ գերունդ – ինֆինիտիվ հակադրության չեզոքացումը տեղի
է ունենում այն դեպքում, երբ՝

1. վերանում են ինֆինիտիվի և գերունդի իմաստային տարբերու-
թյունները, հոլովված ինֆինիտիվը վերածվում է ինֆինիտիվի անփոփոխ
ձևի, այսինքն՝ անհետանում են նրա հոլովական իմաստները (գերմանե-
րեն՝ *zu gehen, anzufragen to go*), և հոլովված ձևի իմաստի համար նոր ձև
է ստեղծվում (հայերեն՝ *գնալու, գնալու համար*, անգլերեն՝ *in order to go,*
so as to go, գերմաներեն՝ *um zu gehen*),

2. ինֆինիտիվը գոյականացվում է:

Ինչ վերաբերում է գերունդի մյուս ընկալմանը, այսինքն՝ չթեքված բա-
յանվանը, ապա այն ի հայտ է գալիս միայն անգլերենում **-ing** վերջավորու-
թյամբ: Նրա ծագումը և հերթագայությունը ինֆինիտիվի հետ վերագրվում
է XII դարին: Այն աստիճանաբար զրավում է անհետացած տրական հոլո-
վով դրված ինֆինիտիվի տեղը և ստանձնում նրա գործառույթները:

Ժամանակի ընթացքում անգլերեն գերունդի գործածության շրջանա-
կը մեծանում է, և նա մակբայական գործառույթներում, ինչպես նաև
նախդրավոր կառույցներում փոխարինում է ինֆինիտիվին¹¹, պահպանե-
լով իմաստային որոշակի տարբերություններ՝ օր.՝ I'll always remember

⁹ Տե՛ս **Зиндер Л. Р., Строева Т. В.** Историческая морфология немецкого языка. Л.,
1968, էջ 231-232:

¹⁰ Տե՛ս **Зиндер Л. Р., Строева Т. В.**, նշվ. աշխ., էջ 227, **Rastorguyeva T. A.**, A His-
tory of English, M., 1983, էջ 112, 245-248:

¹¹ Տե՛ս **Rastorguyeva, T. A.**, նշվ. աշխ., էջ 247-248:

seeing you at the races «Երբեք չեմ մոռանա, ինչպես ձեզ տեսա ձիարշավարանում»։ Please, remember **to post** my letter – «Խնդրում եմ՝ չմոռանաք ուղարկել իմ նամակը»¹²։ Եթե առաջին նախադասությունում խոսքը վերաբերում է անցյալին, ապա երկրորդում՝ ապառնիին։

Անդրադառնալով սուպինին՝ նշենք, որ ինֆինիտիվ – սուպին հակադրությունը որպես կանոն առկա է այն լեզուներում, որտեղ ինֆինիտիվը հանգում է տրականին, կամ տրականի իմաստն արտահայտվում է այլ անդեմ ձևերով, օր.՝ գերունդով։ Հնդեվրոպական լեզուներից սուպին կա լատիներենում և սլավոնական լեզուներում։ Ընդ որում՝ լատիներենում առկա է սուպինի երկու տեսակ՝ սուպին *I -um*-ով, որը հանգում է հայցականին, և սուպին *II -i*-ով, որը հանգում է տրական-բացառականին։ Եթե սուպին *I*-ը գործածվում է շարժման բայերի հետ նպատակի իմաստով՝ *spectatum veniunt* – «գալիս են նայելու», ապա սուպին *II*-ը սահմանափակվում է որոշ ածականների հետ լրացման գործառնությով, ինչպես նաև որոշ քարացած արտահայտություններում՝ *difficile dictu* – «դժվար է ասել», բառացի՝ «դժվար է ասելու (տեսակետից)», *nefas est factu* – «չի կարելի անել»։ Սուպինը աչքի է ընկնում իր պակաս կայունությամբ։ Արդեն դասական լատիներենում սուպինի փոխարեն հաճախ գործածվում է բայածական, գերունդ, գերունդիվ և երկրորդական նախադասություն։ Ժողովրդական լատիներենում սուպինն արդեն փոխարինվում է ինֆինիտիվով, որի հետևանքով էլ այն չի պահպանվել նաև ռոմանական լեզուներում¹³։

Սուպինի կապը ինֆինիտիվի հետ նկատել է նաև ռուս լեզվաբան Ֆ. Բուսլանը՝ այն համարելով ինֆինիտիվի մի տեսակ¹⁴։ Այն գործածվում է հիմնականում անկատար կերպի շարժման բայերի հետ և ավելի պակաս հաճախականությամբ, քան ինֆինիտիվը։ Սուպինը ծագումնաբանորեն հին *ǫ* հիմքի եզակի թվի հայցական հոլովի ձևն է, որը հանդես է գալիս *mb* ածանցով։ Այն ծագումնաբանորեն նախադասության բայի ուղիղ խնդիրն է՝ դրված հայցական հոլովով, որի պատճառով նրա խնդիրն էլ դրվում է սեռական հոլովով։ Կարելի է ենթադրել, որ սուպինը ընկալվել է որպես իսկական բայանուն, որը խնդրառություն չունի՝ *Иду ловить рыби*¹⁵։ Ի հակադրություն դրա՝ լատիներենի սուպինը պահպանում է իր խնդրառությունը՝ *Galli legatos Caesarem mittunt rogatum auxilium*. – «Գալերը Կեսարի մոտ դեսպաններ են ուղարկում օգնության խնդրանքով (օգնություն խնդրելու)»¹⁶։

Արդեն XI դարից սկսած ուշ հին սլավոնական տեքստերում այն դուրս է մղվում և փոխարինվում համապատասխան ինֆինիտիվի ձևերով։ Որպես բայածև այն տարբեր ժամանակներում անհետացել է գրեթե բոլոր սլավոնական լեզուներում՝ սերբերենում՝ դեռևս նախագրային ժամանակաշրջանում, ռուսերենում՝ XIV դարում, չեխերենում՝ XVI դարում։ Այն պահպանվել է միայն սլովեներենում և ներքին լուժերենում։

Ինչ վերաբերում է ռուսերենի ինֆինիտիվին, ապա, ըստ Իվանովի, այն իր ծագմամբ ոչ թե բայական, այլ անվանական ձև է և ներկայացնում է

¹² Տե՛ս **Gouzeeva, K. A., Kostygina, S. I.**, *The Infinitive*, St.-Petersburg, 2000, էջ 133:

¹³ Տե՛ս «Языкознание. Большой энциклопедический словарь». М., 1998, էջ 499:

¹⁴ Տե՛ս **Буслаев Ф. И.** *Историческая грамматика русского языка*. М., 1959, էջ 115:

¹⁵ Տե՛ս **Иванов В. В.** *Историческая грамматика русского языка*. М., 1964, էջ 401, **Камчатнов А. М.**, *Старославянский язык*. М., 1998, էջ 94-95:

¹⁶ Տե՛ս **Покровская З. А., Кацман Н. Л.**, նշվ. աշխ., էջ 192:

գոյականացված բայի տրական-ներգոյական հոլովածնի քարացած վիճակը, որը հոլովվել է չ հոլովմամբ՝ Դ՛Ի¹⁷:

Լատիներենի և սլավոնական լեզուների սուպինին վեդայական լեզվում համապատասխանում է tum-ով ինֆինիտիվը: Հայտնի է, որ վեդայական լեզվում տրական և հայցական հոլովներին հանգող ինֆինիտիվի 16 ձև գոյություն ունի: Տրականն ունի նպատակի պարագայի իմաստ, իսկ հայցականի ձևն անցողական բայերի հետ՝ ուղիղ խնդրի, շարժում ցույց տվող բայերի հետ՝ նպատակի պարագայի իմաստ:

Վեդայական գոյականներից, որոնք վերջանում են *-tu, -ti, -(a)s* և *-(v)an*-ով, ստեղծվում են ինֆինիտիվի ձևերը: Ուշագրավն այն է, որ այն ինֆինիտիվը, որը հանգում է տրականի *-ti*- ին և Ռիզվեդայում հանդես է գալիս միայն 6-7 անգամ, արդեն վաղ հետվեդայական շրջանում լիովին անհետանում է: Ի հակադրություն դրա՝ *-tum*-ով ինֆինիտիվը, որը Ռիզվեդայում հայցականով է դրված, օգտագործված է 5 անգամ, իսկ ավելի ուշ դառնում է ինֆինիտիվի արտահայտման միակ միջոցը¹⁸:

Այսպիսով, արդեն սանսկրիտում ինֆինիտիվի բոլոր ձևերը փոխարինվում են *-tum*-ով ինֆինիտիվով, կախվածությունը անվանական կազմություններից լիովին վերանում է: Ձեռք բերելով տրականով ինֆինիտիվի իմաստ՝ այն միայն մի դեպքում է պահպանում իր անվանական ժազման հետքը, երբ հանդես է գալիս բարդ բառերի կազմում՝ որպես անվանական հիմք՝ *-kāma, -manas-* բայափոխների հետ, օր.՝ *yaśtukāma* «զոհաբերել ցանկացող», *vaktumanas* – «խոսելու տրամադրված, հակված»¹⁹:

Ինֆինիտիվի և սուպինի հակադրությունների չեզոքացումը տեղի է ունենում, այսպիսով, այն դեպքում, երբ՝

1. իմաստային և գործածության առումով տարբերությունները անհետանում են, և սուպինի գոյության անհրաժեշտությունն ինքնուստինքյան վերանում է, ինչպես օր.՝ ռուսերենում և ռոմանական լեզուներում,

2. համընկնում են նրանց ձևերը և հաղթում է այն իմաստը, որը ավելի կենսունակ է, ինչպես ռուսերենի դեպքում:

Եթե սկզբունքորեն դիտարկենք ինֆինիտիվի երկու տեսակ՝ տրականին և հայցականին հանգող, ապա կարող ենք ասել, որ հաճախ տրականին հանգող ինֆինիտիվը իմաստային առումով մոտ է նախդրավոր ինֆինիտիվին, իսկ հայցականին հանգողը՝ սուպին *I*-ին: Անշուշտ, նախդիրն ինքնին հաճախ արտահայտում է տրականին բնորոշ հանգման, նպատակի իմաստ և խնդրառում տրական հոլով: Երբեմն էլ, խնդրառելով հայցական հոլով, անուամենայնիվ պահպանում է տրականի իմաստը, ինչպես, օրինակ՝ հայերենում և լատիներենում: Ընդ որում՝ այս դեպքում կարող են տեղի ունենալ տարբեր կարգի չեզոքացումներ: Սակայն անկախ այդ տարբերություններից, ստեղծվում են նոր ձևեր երկու իմաստներն արտահայտելու համար: Հայերենում նախդրավոր ինֆինիտիվը վերանում է ի հաշիվ այլ, նաև հետդրավոր ձևերի՝ *ի գնալ-գնալու*, կամ *գնալու համար*, գերմաներենում և անգլերենում այն հիմնականում պահպանվում է, ա-

¹⁷ Տե՛ս **Иванов В. В.**, նշվ. աշխ., էջ 376, 400- 401:

¹⁸ Տե՛ս **Семереньи О.** Введение в сравнительное языкознание. М., 1980, էջ 339:

¹⁹ Տե՛ս **Барроу Т.** Санскрит. М., 1976, էջ 341:

պահմաստավորվում՝ *zu gehen, to go*, և այդ իմաստի համար ստեղծվում է նոր ձև՝ *um zu gehen, in order to go, so as to go*: Ռուսերենում տեղի է ունենում ձևերի բաղարկություն (կոնտամինացիա), որտեղ պահպանվում են երկու ձևն էլ՝ առանց գործառական տարբերակման՝ *идти, нисамь*:

Մյուս կողմից՝ կարող ենք որոշակի զուգահեռներ տանել սուլային և աննախդիր ինֆինիտիվի միջև, քանի որ երկուսն էլ շարժման բայերի հետ են հանդես գալիս և հիմնականում հանգում հայցական հոլովին: Տարբերությունն այն է, որ սուլայինը միշտ չէ, որ ինֆինիտիվի նման պահպանում է իր խնդրառությունը:

Եթե հակադրության եզր ընդունենք ինֆինիտիվի ուղիղ ձևը, ապա այն կարող ենք հակադրել մի կողմից տրական հոլովին հանգող ինֆինիտիվին կամ նախդրավոր ինֆինիտիվին, իսկ մյուս կողմից՝ սուլայինին և գերունդիվին:

Ինֆինիտիվի և այլ անդեմ ձևերի իմաստագործառական հակադրությունները աղյուսակի տեսքով ներկայացնելիս՝ կունենանք հետևյալ պատկերը՝

Բայի անդեմ ձևեր	Գործողության ընդհանուր իմաստ	Շարժման, ուղևորման բայերի հետ նպատակի իմաստ	Նպատակի, հանգման, անհրաժեշտության իմաստ	Կրավորականի իմաստ
Ինֆինիտիվի ուղիղ կամ հայցականին հանգող ձև	+	+	-	-
Տրական հոլովին հանգող (կամ նախդրավոր) ինֆինիտիվ՝ գերունդ	-/+	-/+	+	+
Սուլային I	-/+	+	-	-
Սուլային II	+	-	+	+
Գերունդիվ	-	-	+	+
Անգլերենի <i>-ing</i> -ով գերունդ	+	+	-	-

Ինֆինիտիվի ուղիղ կամ հայցականին հանգող ձևը, արտահայտելով գործողության ընդհանուր իմաստ, մուտք է գործում նաև սուլային I-ի գործածության ոլորտը՝ շարժման, ուղևորման բայերի հետ արտահայտելով նպատակի իմաստ: Հին ռուսերենում պահպանվել են նաև սուլայինի գործածության դեպքեր՝ գործողության ընդհանուր իմաստով, ինչպես օրինակ՝ *ուզենալ* բայի հետ՝ *хотеть + սուլային*²⁰: Սա ևս մեկ անգամ հուշում է, որ սուլայինը իր բնույթով և ծագումով համարժեք է հայցականին հանգող ինֆինիտիվին: Պատահական չէ, որ այն հանդիպում է հենց ռուսերենում, քանի որ ռուսերենի ինֆինիտիվը տրականին է հանգում:

Տրական հոլովին հանգող կամ նախդրով ինֆինիտիվը (գերունդ) նպատակի իմաստն արտահայտում է մնացած այլ բայերի հետ, ինչպես նաև ունի հանգման, անհրաժեշտության իմաստ: Բանն այն է, որ տրականին հանգող ինֆինիտիվին բնորոշ է մեղիոպասիվի իմաստը, որը որոշ դեպքերում կարելի է բխեցնել նրա հիմքից: Ղեռևս Կ. Բրուզմանը և

²⁰ Տե՛ս Буслев Ф. И., նշվ. աշխ., էջ 115, 376:

Բ. Դելբրյուկն են նկատել, որ տրական ինֆինիտիվները նախալեզվում ծագում են աորիստի հիմքից²¹, որն էլ, ինչպես հայտնի է, ունի գործողության որպես փաստի կամ գործողության ավարտվածության նշանակություն²²: Սա էլ իր հերթին պայմանավորում է նրա սեռային չեզոքությունը: Որոշ լեզուներում, ինչպես անգլերենում, նախդրավոր ինֆինիտիվը մտնում է աննախդիր ինֆինիտիվի գործածության շրջանակ՝ հանդես գալով նաև շարժման բայերի դեպքում²³:

Սուլային II-ը պահպանվել է միայն լատիներենի որոշ քարացած կառույցներում, որը կարող է ունենալ անհրաժեշտության իմաստ և արտահայտել գործողության ընդհանուր իմաստ:

Ինչ վերաբերում է գերունդիվին, ապա այն ունի ածականական ծագում, սակայն երբեմն ստանձնում է նաև անհրաժեշտության կրավորականի իմաստ և մրցակցում գերունդի հետ:

Ինչպես վերը նշվեց, անգլերենի -ing-ով գերունդը նույնպես մրցակցում է ինֆինիտիվի հետ: Վերոհիշյալ դեպքերին կարելի է ավելացնել նաև շարժման բայերի հետ նրա գործածությունը²⁴:

Ինֆինիտիվի և բայի այլ անդեմ ձևերի մրցակցությունը սրանով չի ավարտվում: Տարբեր լեզուներում միևնույն բայից հետո դրվում է կամ բայածական, կամ ինֆինիտիվ: Այսպես՝ հին հունարենում իմացական բայերից հետո դրվում է բայածական, իսկ լատիներենում՝ անորոշ, օր.՝ *idā de mellonτα αποδρασεσθαι* – «ես գիտեմ, որ դու ուզում ես փախչել»: Լատիներենում *scire* բայը հանդես է գալիս հայցականը անորոշի հետ կառույցում *Scimus Attilium esse sapientem* – «Գիտեմք, որ Աթիլիասը խելացի է»²⁵:

Տարածամանակյա հայեցակետից ինֆինիտիվը երբեմն նաև առանց հակադրություն կազմելու հերթագայում է տարբեր բայածականների հետ: Մյուս կողմից՝ այն կարող է փոխարինվել իրենից սերված նոր ձևերով:

Գերմաներենում ինֆինիտիվը հերթագայում է Partizip I-ի (ենթակայական դերբայ) հետ: Այսպես՝ ապառնիի իմաստը հին վերին գերմաներենում արտահայտվում է երկու ձևով՝ *werden+Partizip I* և եղանակավորիչ բայ + ինֆինիտիվ կառույցներով: Հետագայում *werden+Partizip I*-ը վերածվում է *werden+ինֆինիտիվ-ի*: Բայածականից անորոշի անցման մասին տարբեր տեսակետներ կան գերմանագիտության մեջ, ընդ որում՝ այն մեկնաբանվում է և՛ հնչյունական²⁶, և՛ համաբանության տեսակետից²⁷: Մի կողմ թողնելով նրանց մանրամասները՝ նշենք, որ համանման անցում տեղի է ունենում նաև *bleiben, stehen, liegen, sitzen* բայերից հետո²⁸:

Ինչ վերաբերում է ինֆինիտիվից սերված ձևերին, ապա այս դեպքում ինֆինիտիվն ինքն է վերածվում այդ ձևերին, և անցման պատճառ է այն, որ ինֆինիտիվը դադարում է արտահայտել իր հոլովական նախկին ի-

²¹ Տե՛ս **Brugmann, K., Delbrück, B.**, նշվ. աշխ., էջ 448-449:

²² Տե՛ս **Савченко А. Н.** Сравнительная грамматика индоевропейских языков. М., 1974, էջ 276:

²³ Տե՛ս **Gouzeva, K. A., Kostygina, S. I.**, նշվ. աշխ., էջ 163:

²⁴ Տե՛ս **Gippert, J.** Zur Syntax der infinitivischen Bildungen in den indogermanischen Sprachen, Frankfurt am Main, 1978, էջ 51, 300:

²⁵ Տե՛ս **Hirt H.**, նշվ. աշխ., էջ 91:

²⁶ Տե՛ս **Behaghel, O.** Deutsche Syntax – Eine geschichtliche Darstellung, Band 2, Heidelberg, 1924, էջ 365:

²⁷ Տե՛ս **Зиндер Л. Р., Строева Т. В.**, նշվ. աշխ., էջ 224:

²⁸ Տե՛ս **Dal Ing.** Kurze deutsche Syntax, Tuebingen, 1966, էջ 102 -103:

մաստները և վերածվում է ընդհանուր բայական իմաստը նշող ձևի: Իսկ ավելի կոնկրետ իմաստները արտահայտվում են նոր հոլովված ձևերով: Իհարկե, որոշ հոլովական ձևեր տարբեր լեզուներում այնուամենայնիվ պահպանվում են, ինչպես օրինակ՝ գործիական հոլովով դրված ինֆինիտիվը հայերենում, որն արտահայտում է ձևի պարագայի իմաստ, և որն իր բնույթով մոտենում է գերունդիվին՝ անփոփոխ ինֆինիտիվի հետ հակադրություն չկազմելով:

Դերբայական նոր ձևերի առաջացումը անորոշ դերբայից հատուկ է, օրինակ, հայերենին, որտեղ աստիճանաբար ձևավորվում են առանձին դերբայներ, օրինակ՝ ապառնի և ապառնի երկրորդ դերբայները, ժխտական դերբայը, անկատար երկրորդը, իսկ անորոշի տրական հոլովի ձևը հաճախ մուտք է գործում նրա գործածության ոլորտ:

Ինֆինիտիվից սերված ձև է համարվում գերմաներենում այսպես կոչված Partizipium futuri կամ passivi (գերմանական գերունդիվ)՝ ein zu befürchtender Krieg – «սարսափազդու պատերազմ», որն առաջացել է sein+zu+Infinitiv կառույցից՝ Der Krieg ist zu befürchten – «Պատերազմը վախենալի է», և որը նպաստել է նաև այն բանին, որ Partizip I-ը ստացել է կրավորականի նշանակություն²⁹: Այս տիպի նախադասություններում ինֆինիտիվը ընկալվում է որպես ստորոգյալ՝ ածականի հետ միասին, օր.՝ der Rat ist nicht übel und zu befolgen³⁰ – «Խորհուրդը վատ չէ և հետևելի է»: Ժամանակակից հայերենում սրան համապատասխանում է ապառնի երկրորդ դերբայը, որը նույնպես սերում է անորոշից և օժտված է կատարելի գործողության, առարկայի որակական հատկանիշի կամ առարկայական իմաստներով և **-ի** կամ **-իք** վերջավորություններով³¹:

Այսպիսով, ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ ինֆինիտիվը անդեմ ձևերի համակարգում հիմնականում հակադրվում է սուպինին ու գերունդին, մասամբ նաև՝ գերունդիվին, որոնք ժամանակի ընթացում որպես կանոն վերածվում են կամ անփոփոխ ինֆինիտիվի, կամ գերունդային այլ քարացած ձևերի:

Այլ կերպ՝ ինֆինիտիվի և այլ անդեմ ձևերի հակադրություններում թերևս ոչ նշույթավորված ինֆինիտիվի ուղիղ ձևն է կամ արդեն գործողության ընդհանուր իմաստ ունեցող քարացած այլ հոլովածները, քանի որ նշված հակադրությունները չեզոքանում են հենց վերոհիշյալ ձևերի օգտին, ինչի հետևանքով ստեղծվում են ինֆինիտիվի և ինֆինիտիվից սերված նոր ձևերի հակադրություններ:

АРМИНЭ ГАГИНЯН – Об историческом развитии оппозиций инфинитива и других неличных форм глагола. – В статье рассматриваются тенденции, присущие развитию оппозиций инфинитива и других неличных форм глагола в ряде индоевропейских языков. Если в качестве единицы оппозиции принять прямую форму инфинитива, то ей противопоставлены, с одной стороны, инфинитив, восходящий к дательному падежу (герундий), или предложный инфинитив, а с

²⁹ Տե՛ս Зиндер Л. Р., Строева Т. В., նշվ. աշխ, էջ 227:

³⁰ Տե՛ս Dal Ing., նշվ. աշխ., էջ 110:

³¹ Տե՛ս **Լ. Եգեկյան**, Հայոց լեզու, Եր., 2005, էջ 282-283:

другой – супин и герундий, которые в дальнейшем преобразовываются, как правило, либо в несклоняемый инфинитив, либо в одну из застывших форм герундия.

Иначе говоря, в оппозициях инфинитива и других неличных форм глагола немаркированной является все же прямая форма инфинитива либо другие устойчивые падежные формы, уже имеющие общее значение действия, поскольку названные оппозиции нейтрализуются именно в пользу этих форм, вследствие чего возникают оппозиции инфинитива и образованных от него новых форм.

Нейтрализация оппозиции герундий – инфинитив происходит, когда исчезают семантические различия между герундием и инфинитивом, склоняемый инфинитив преобразуется в несклоняемую форму, т. е. исчезают его падежные значения (в немецком) и возникает новая форма для выражения значения склоняемой формы (в армянском, английском, немецком), а также в том случае, когда инфинитив субстантивирется.

Нейтрализация оппозиции инфинитива и супина происходит, когда исчезают смысловые различия и различия в их употреблении и супин перестает быть необходимым, как, например, в русском и в романских языках, и когда их формы совпадают и побеждает более устойчивое значение, как в русском.

ARMINE GAGINYAN – *On the Historical Development of the Oppositions between the Infinitive and Other Impersonal Forms of the Verb.* – The present article deals with the tendencies of development of **oppositions** between the infinitive and other impersonal forms. If we take the initial form of the infinitive as the edge of controversy, we can put it against the dative case derived (gerund) or preposition-infinitive patterns on the one hand and supine and gerundivum on the other hand, which in the course of time, turn into either unchangeable infinitive, or into other stable gerund forms.

Otherwise, in the contradiction between infinitive and other impersonal verbal forms the unmarked form is the initial form of the infinitive or the other stable case forms of general characteristics of action, as counter forms mentioned above are neutralized precisely in favor of the already mentioned forms, which consequently set up new forms of infinitive and derived infinitive.

The **opposition** gerund – infinitive gets neutralized as soon as the semantic differences between these forms disappear, the infinitive with case markers change into the unchangeable form of infinitive, namely, their case meanings (in German) and a new form for the meaning of the declined forms emerges (in Armenian, English, German), as well as in case the infinitive form is substantivized.

As for the neutralization of infinitive-supine **opposition**, it also occurs when the semantic and functional differences disappear. Thus the necessity of the existence of supine disappears all by itself, as, for instance, in Russian and Romance languages and when their forms coincide and the most viable meaning survives, as it happens in Russian.